ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղրան. կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի:

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 րուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 րուբլի:

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչեւ 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից:

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ խմբագրի բառին մի անգամույ համար 1 շահի: Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ:

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1896 ԹՒԻ

Գ. ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ Գ. ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակվի Թէհրանում նոյն ուղղութեամբ և նոյն ծրագրով: «Շաւիղի» բաժանորդագինն է Պարսկաստանի համար մէկ թուման. կէս տարուանը վեց ղրան: Արտասահմանի համար 3 րուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 րուբլի կամ 5 ֆրանկ:

Ռուսաստանից դրամական ծրարները պիտի ուղարկեն անպատճառ հետեւեալ հասցէով: Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ, пер. А. Бекъ-Назарову. Խնդրվում է ուշք դարձնել ճիշտ այս հասցէով և առանց մի բառ մոռանալու ուղարկել դրամները, այլապէս չեն ընդունվիլ: Եւրոպայից ուղարկել պէտք է փոխանակագրով կամ թղթադրամով. Հասցէն Եւրոպայի համար Téhéran, Redaction «CHAVIGH». այդ հասցէին պիտի լինի նաև Ռուսաստանից խմբագրութեան ուղղուած թղթակցութիւնները:

Ապառիկ բաժանորդագրութիւն ոչ մի դէպքում չէ ընդունվում:

Պարսկաստանի համար հասցէն Redaction «CHAVIGH», Téhéran.

Խմբագրութիւնը ունի գործակալ՝ներ հետեւեալ տեղերում:

Կովկասում.—Թիֆլիս՝ «Մուրճի» խմբագրութեան մէջ պ. Յ. Յակոբեան. պ. Խ. Արզումանեան: Բաթում.—պ. պ. Գ. Գրիգորեան, Սահակեան Քէօսէեան: Բագու—Տպարան «Աւրօր». Որդիք Բ. Արզումանեանք: Բալախանի.—պ. Բալասի Ա. Գաբրիէլեան: Կարս.—պ. Աբէլ Ապրեսեան: Շուշի.—պ. Թումաս Մ՝հերեան: Ախալքալաք.—պ. Զաւադ Տ. Գրիգորեան: Օդեսսա.— Որդիք Բ. Արզումանեանք: Եւրոպա. Ռուսչուք.—պ. Փ. Հայլեան: Պարսկաստանում.—Սալմաստ՝ պ. Յ. Ապրեսեան (Եղբայրք Մ. Արզումանեանք) Արդաբիլ՝ պ. Յակոբ Էլչիբէկեան: Նոր-Ջուղայ՝ պ. Յովսէփ Բաբաեղեան: Բուշիր՝ պ. Կ. Չէյթունեան: Ռաշտ և Էնզէլի՝ պ. Ալէքսան Յովսէփեան: Մարաղա՝ պ. Մելքոն Խալաթեանց. Դավրէժ՝ Ընթերցասիրաց Գրադ. ընկ. խանութ. Համադան պ. Յակոբ Յակոբեան

Գործակալ չեղած քաղաքներից բաժանորդագին կարելի է ուղարկել պարսկական նամակադրոշմներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վարագոյրը ծածկվում է նորից..—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայկական հարցի մասին. Հակայատաջադիմական տարր. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի տեսութիւն.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ. Փէլիէտօն:

ՎԱՐԱԳՈՅՐԸ ԾԱԾԿՎՈՒՄ Է ՆՈՐԻՑ

Հազիւ բացուել էր վարագոյրը և բեմի վրայ ականերև դրուել էին այն բոլորը ինչ որ կուլիսների ետևում, օրինականութեան դիմակի տակ կատարվում էր մի յուսախաբ ժողովուրդի հետ, հազիւ հոսող արիւնը ապացուցանում էր այդ ժողովրդի կրած տանջանքը մի երկրում ուր նա մի րոպէ հանգիստ չէ ունեցել, ուր նա շարունակ կրում է ամէն տեսակ գազանութիւն ու վայրենութիւն, հազիւ ամբողջ երկրագունդը սկսել էր սոսկումով տեսնել մարտիրոս ժողովրդի սպառումը—երբ կլանող դիպլոմացիան վրայ հասաւ և շտապեց նորից ծածկել դէն խլած վարագոյրը: Ինչ որ ուզում է թող կատարուի խուլ մթին անկիւններում, մէկ մէկ, քիչ քիչ, բայց անընդհատ. թող սկսեն Տրապիզոնից և վարագոյրի ետևում թաղնուած վերջ տան մինչև Միջագետքի եղած հային, բայց թող այդ բոլորը կատարուի լռիկ և թագուն...

Եւրոպական դիպլոմացիան մի անգամ ևս ապացուցեց որ շնորհիւ մի տարաբաղդ ժողովրդին միմեանց ձեռքից խլելու փափագին, 40,000 մորթուած դիակների առաջ սառնութեամբ կանգնել և ժպտել գիտէ: Ցոյց տուաւ որ եթէ ամբողջ հայութիւնը կոտորուի, իր կողմից ոչ մի քայլ չէ անելու առանց ականերև շահի, առանց կլանելու հաւանականութեան:

Եւ այդպիսով փակում է նա նորից վարագոյրը՝ թողնելով որ կուլիսների ետևում ծածկւեն բարբարոս տեսարաններ, որոնցից նա շահ չունի:

Իսկ ինչ որ արեց՝ կոմիկութիւն չէր, այլ կամ կլանելու և կամ վարագոյրը նորից ծածկելու քայլ:

Այդ մասին ահա թէ ինչ է ասում մի Եւրոպայի թերթ:—«Հանդիսատես ենք լինում—գրում է նա—մի տեսարանի որ շատ ծիծաղաշարժ կարող է լինել, եթէ գետնի վրայ փռուած չը տեսնուէին 30,000 (40,000 ից աւելի) դիակներ: Կառողները, որոնք յաղթել են, վիճում են միմեանց մէջ Կապիտոլը ելնելու մասին: Յաղթութիւն են երգում այնտեղ, ուր մենք միայն կորուստ ենք տեսնում: Սուլթանը հրատարակելու տւեց Կ. Պօլսի թերթերի մէջ մի աննշան զեկուցում... և ահա անգլիական մամուլը այդ փաստը նկատում է Մեծն Բրիտանիայի համար որպէս դիպլոմատիկական յաղթութիւն. Ֆրանսական լրագիրները միաձայն վերագրում են այդ՝ ռուս-ֆրանսական համաձայնութեան դիպլոմատիային. Վիէննայի մամուլը նրան ցոյց է տալիս որպէս կանխահաս պտուղ (primeur) Կ. Պօլսի աւստրիական դեսպան բարոն դը Կալիսի... Ականատես ենք այդ բոլոր յաղթական կամարներին, լսում ենք այդ շեփորների ձայնը, բայց մնում ենք համոզուած որ յաղթութեան արմաւենին պատկանում է միմիայն նրան, որին հրատարակում են որպէս յաղթուած—այն է սուլթանին:

....Չը նայելով մամուլի բողոքներին, չը նայելով Անգլիայի և Ամերիկայի միտինգներին, չը նայելով Գլադստոնի և Սօլիսբուրիի Ֆիլիպպիկաններին, չը նայելով մեծ պետութիւնների քայլերին և չը նայելով անգլիական նաւատորմի շարժումներին... սուլթանը յաղթեց ամէն ուղղութիւնով...

Եռապետեան դաշնակցութիւնը չուզեց գործել, որովհետև ուղղակի շահ չունէր Հայաստանում: Ֆրանսիան չուզեց—որովհետև թիւրքերի հետ բարեկամ մնալու պէտք ունի, տեղից խաղտելու համար Եգիպտոսից՝ իր բրիտանական հակառակորդին: Ռուսաստանը չուզեց՝ որովհետև նա պատրաստութիւններ է տեսնում հաւանականաբար կուելու հա-

ՖԵԼԻԵՏՕՆ

(Գաւառական)

—

Նախայէս վաղ չեն ելեալ.—Մեր տեսուճի ճառը.—Չետերի միթինգը.—Սասունի քախծածքերը.—Փօրթուգալի եթիմ եխսիրբերը.—Վարթըպետի սեափարը.—Խայիրի թեազա ղլօխը.—Հափտըւանի ախըրաթը (ապագան):

—

Վանղուց էր մաղալ մեխետ եախաս ղինջացիրէր, քեաշփրեմէր ղըաղ. ախու անէս էլ չեմ էր տիւս եկեալի, ասեսեմ էր բեալքի էդ խալխը եախայէս վաղ իկեան. ամմայ տըրնասեմ չ՚ըկըի, զօռով գիւջով իկեասեն գիանեսեն ընձիկ: Ես էլ մընացիրեմ երկու կրակի մէջ տեղը. ադեար ասեսեմ Փլան պանը ընցայի, ասեսեն Գարբուխը ծըււիրի. ադեար չ՚եմ ասելի՝ չ՚ըլեյի. մախլաս, մընացիրեմ չիւար-սեարդեարդան. ինչ ասիրենէր «թողնեսեմ դօշաքըն՚ի թափեսլի, բընեսեմ՝ փօրըս՚ի պատուելի...»

Ախըր իմ բարայի քընծօխը պըընի, բեաս չ՚ասեմ ինչ անեմ. եւանդ էթասեմէր քաղաք ոտըս կոտըրւէր, թեարսի լման հափտըւանով ընցամ, ղաղա-բալեն ղունէդ ղառ. հափտըւան մասամ չ՚մտամ՝ տըընեմ քսան եասուն խաքի ժողովըւրեն մէյխանի դուռը, դասէն դեանց մէջը տեսուճի ճօնըխաթ քըթագը նեան բիղ մըրժուը աչկիս կըպաւ, ընձի տւիմ թեխ էն թեխը. բալադ չ՚խորիմս. տեսուճը կայնիբի թմբի վրան, մէ իրեք գեազըկեանց կաղեթ պըռնիբի ձեռը կեառթայի. վալլահ էնքան չ՚խասկըցամ կաղեթի անըմը. եա «Ծակ» գիւը ըլէր, եա «Ծականք». մախլաս, կեառթալէն եափ փող գիանող ջհուդի լման վեր-վեր թըռնելով՝ բոռաց «Աղզային եղբայր, Չեղ և մեղ մեծ աւետիս, Չէստերում մեր աղզայինք և անգլիացիք մեծ միթենգ մը կայացուցեր են հոգուն հայ եղբարց, վերջն ալ սըրտաճըմլիկ ձայնով մը Ծիծեռնակ երգեր են, ամէնէն վերջը միաբերան բոռացեր են կե՛ցցէ Հայաստան:»

Ա՜յ ձեր կօտըն ուտի ձեր միթինգը. տօւմյ, իչօ՞ միթինգ կայացուցեր են. միթինգըս վեարըն՚ի, ղմ՜դըս վեարըն՚ի, չաղուն տրածի խայերու վիզը մօռթեսե՜ն, Սասուն քախցու մերըմանուկը ուրացիբի՝ դեանք Չեստերում միթինգ են սարքելի.... Թօ՜, խեյքըներիդ աղ անեմ, տօւմյ. բեյա Սասուն խայերը քախցու ոտըքերը պարգիբեն մեռնեսեն, Արզրումում, Տրապիզոն, Խարբերդ գիւլիւլան կարկուտի տեղ՚ի թափեսլի, դեանք անջաղ ինգլիզի երկրում գէժգէժ «կեցցէ Հայաստան» են բոռալի....Ձեր տունը աւըրւի, էլ դէօր կեցցէ Հայաստան, մեխետիբով ասէք «խարաբ Հայաստան». համ ձեր եախան պըռծընի, համ մեր, եօխսայ Սասուն քախծու կոտորվան Չեստերում կօնեակը ափք դեամըքերիդ, վերջըն էլ սըրտաճըմլիկ ձայնով մը՝ ղարաբաղի բրախիք, դեարմով սովեալների փորը չի քշտանայ: Ճար ունէք ճար տըսէք, ձեզի մէ օր լացէք: Վիրըն չ՚էս ասելի. աղուրթ որ հենց էտ «Ծականք» կաղէթ տիպողի քթեագի տակը ծակ՚ի ելի. եօխսայ չէ, վեավէ՜ լըսի ախպէ՜ր, Չեստերում Ղարաբաղի ասեն, Սասունըմ փոր քըշտանայ:

***

Էլը դեանք ջըհաննամը. Սալմաստ էդ Փօրթուգալի եթիմ եխսիրքերի իդդահէն չենք պըռծընելի. խոքիս սատանի պաժին ըլի աղեար սուտ եմ ասելի, դիլանչութիւնը լափ վիզի առած, խալխս մէ տօրպակքերըն՚ի պակաս:

Արար աշխար կրակ պըռնիբի էրւելի, էդ եալանչի փահլըվանքերը անջաղ էկիրեն մըտիրեն Սալմաստ: Ջօչ-ջօչ պատըւեսեն՝ եանի քի մենք էլ ազգային մարթ ենք.... քելէք ա՛յ փաղիրքե՛ր, ադեար դիւք դիւզ մարթ էք, դեաղ ինչ էք անելի, ձեր ազգային ըլեւը ձեր կօտըն ուտի, քելէք դեաղ որ ձեր աըըլ (խա-

մար Ժապոնիայի հետ։ Անգլիան չ'ուզեց որովհետև վախեցաւ գրգռելու և օտարացնելու իր հնդկամահմետական հպատակներին....

...Թողնենք խօսելու Daily Chronicle-ին, որ այսօր ներկայանում է հայկական հարցի ամենաջերմ պաշտպանը։ «Ինչ վերաբերում է Լորդ Սալսբիւրիի ձեռք բերածին, ինչպէս կարելի է նրան կշռել կամ չափել. ստւերի ստւերն է նա։ Զիջումները պարզապէս ծիծաղելի են. մինչև իսկ անւանական կոնտրոլը, որի մասին խօսւած է Կիպրոսեան Դաշնադրութեան և Բերլինի կոնգրեսում՝ չէ ընդունւած։ Առանց նրան, ըէֆորմները նմանում են հայելու վրայ փրչւած մի շունչի։ Ահա մեր ամբողջ դիմլոմացիայի, մեր սպառնալիքների... արդիւնքը... Լորդ Սալսբիւրիի լեռը ծնաւ մի մուկ»։

Դրանով էլ վերջացնում է l'Armenie իր առաջնորդող մի յօդւածը, որի վերնագիրը դրել է «որին են խաբում»։

Այստեղ խաբում են ոչ թէ միմեանց՝ այլ զոհերին. յաղթողի կերպարանք ունեցող պարտւողները չը թողնելուց յետոյ որ իրենցից մէկը ընկնող դիակից մի կտոր կորզէր—քաշվում է ասպարէզից՝ խաբւած թողնելով մի թշւառ, հալածւող ժողովրդի. որ, երկրորդ անգամը լինելով, զոհ է գնում եւրոպական բորենիների...

Այդտեղ հային են միայն խաբում, ուրիշ ոչ ոքի։

Վ. Փ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Հաստատվում է որ ապստամբ հայերը Զէյթունում գրաւել են պահպան զօրքը և պահել նրանց որպէս պատանդ. Նրանց հետ վարվում են շատ լաւ, բայց հայերը սպառնացել են սպանել բոլորին, եթէ Զէյթունին մօտեցող տաճկական զօրքը սկսի յարձակում և ապստամբներին ներում չը շնորհւի։ Բայց այն լուրը որ երբ թէ Մուստաֆա փաշան 20 վաշտ զինւորով մօտեցել է Զէյթունին և պաշարել՝ չէ հաստատվում։ Հայերը լաւ զինւած են ունին մինչև իսկ երկու թնդանօթ, նրանք գրաւեցին և թալանի տւին շատ թիւրքական կէտեր։

Corr. Bureau

Վիէննայից որպէս լուր հաղորդում են որ այն դէպքում, եթէ խռովութիւնները Հայաստանում չեն դադարել, կառավարութիւնները լիազօրութիւն կը տան Ռուսաստանին, գրաւել Հայաստանը, բայց մի և նոյն ժամանակ Կ. Պոլսում, Լոնդոնում կամ Բերլինում կը գումարւի եւրոպական կոնֆերանս, որ կորոշի գրաւման ժամանակամիջոցը և գրավւող երկրի սահմանները։

Daily News

«...Ըէֆորմների վերահսկող յանձնաժողովի անդամներին լաւ ճանաչելով՝ կարելի է այն կարծիքը կազմել որ բարձրը շրջաններում շատ լուրջ չեն նայում ըէֆորմների հարցի վրայ. քրիստոնեայ անդամներից մէկը յոյն է և երկուսը հայեր։ Բոլորն էլ թիւրքաց հաւատարիմ պաշտօնեաներ, որոնք ի հարկէ չեն համարձակւիլ իրենց դատողութիւնը ունենալ։»

Frank. Zeitung

...Թիւրքաց բոլոր շրջաններում այն կարծիքն է յայտնվում, որ Թիւրքիայի իսկական բարեկամն ու պաշտպանը Ռուսաստանն է։»

Berliner Tageblatt

...Հաղորդում են սարսափելի աւերումների մասին, որ կատարել են վեց վիլայէթների քիւրդերը Դերսիմի և Ալաշկերտի շրջաններում»։

Ռուս. հեռ. գործ.

«...Հաստատացնում են որ Զէյթունի հայ եպիսկոպոսը կարգադրեց որ եկեղեցիները և վանքերը բերդերի փոխարկեն և նրանց մէջ կեդրոնացրեց վառօդի և մթերքների մեծ պաշարներ»։

Լոնդոնի թիւրքաց դեսպանութիւն

Մշակ

Ականատեսների վկայութեամբ, Երզրումում, խառնակութիւնների ժամանակ կոտորեցին 1000 քրիստոնեաներ, որոնց վրայ սարսափելի գազանութիւններ են կատարուած։ 521 մարդ թաղուած են հայոց գերեզմանատնում։

Daily News

Հաստատւած է որ Դիարբեքիրում 5000-ից աւելի մարդ է սպանւած։

Daily News

Թիւրքական պաշտօնական թերթերում զետեղւած է 120 վաշտ զօրք զէնքի հրաւիրելու զեկուցումը. այդ զօրքը զսպելու է Անատոլիի անկարգութիւնները։

ՀԱԿԱՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ՏԱՐՐ

—

Շրկայ աշխարհումս ոչինչ մնայուն. անցեալը մեռնում է, նրան յաջորդող ներկան երեւան է գալիս կերպարանափոխւած ոչ բոլորովին-նման անցեալին, և բնութեան մէջ ամեն ինչ անպայման ենթարկվում է այս օրէնքին։ Ինչպէս ողջ բնութիւնը այնպէս և բնութեան էակները, մարդկութիւնը նոյնպէս, միշտ ենթակայ են փոփոխութեան այդ օրէնքին, որին կոչում են առաջադիմութիւն։ Իւրաքանչիւր նոր բոպէն մարդկային կեանքի մէջ՝ յառաջացնում է մի նորութիւն. այն ինչ որ մարդկութեան համար մի բոպէ առաջ անվիճելի ճշմարտութիւն էր, լաւ էր, բարի էր—մի բոպէ յետոյ՝ սկսում է վիճելի կէտեր ունենալ, կասկածի տակ ընկնել։ Որքան միտքը յառաջադիմում է, կեանքն էլ նրա հետ ենթարկվում է նորանոր փոփոխութեանց։ Աշխարհիս առաջին մարդիկը իրենց մտքի զարգացմամբ, կեանքի և ապրուստի եղանակներով, նիստ ու կացով այն չէին, ինչ որ այսօր. և եթէ համեմատելու լինենք ներկայի հետ, ահագին անջրպետներ կը գտնենք այդ երկուսի մէջ. այնպիսի ահագին փոփոխութիւններ, որ մարդու միտքը չփոթվում է։ Սակայն այդ փոփոխութիւնը ժամանակի անհունութեան հետ համեմատելուց յետոյ՝ չփոթման ոչ մի տեղիք չի մնայ, որովհետև, եթէ աշխարհիս սկզբից մարդկութիւնը նոյն քայլերով յառաջադիմէր, ինչպէս վերջին երկու դարերում,—այժմ մարդկութիւնը շատ և շատ յառաջ ընացած կը լինէր, քան թէ՝ ինչ որ է ներկայումս։ Որպէս տարբեր ժամանակամիջոցներում տարբեր աստիճանի արագութեամբ է զարգանում յառաջադիմութեան անիւը—իւրաքանչիւր նոր յաջորդող շրջան՝ մի որոշ աստիճանի արագութիւն է տալիս անիւի պտտոյանքներին. այդպէս և, թէև մի և նոյն ժամանակամիջոցներում, զանազան ազգերի, ցեղերի, դասակարգերի համար յառաջադիմութեան անիւը մի և նոյն արագութեամբ չի դառնում,—բայց և այնպէս՝ բոլորի անիւներն էլ միշտ դէպի յառաջ են դառնում, չը նայած մէկը արագ, միւսը՝ նրանից թոյլ, երրորդը՝ աւելի թոյլ և այլն։ Յառաջադիմութիւնը, կուլտուրական զարգացումը միջոցներ է տալիս ազգերին, ցեղերին և դասակարգերին ստեղծելու իրենց համար աւելի բարեկեցիկ կեանք. ուրիշ խօսքով՝ յառաջադիմութիւնը, կուլտուրական զարգացումը՝ ըստ կեանքի պահանջների, զինում է ազգերին, ցեղերին և դասակարգերին նորանոր կատարելութիւններով, որոնց միջոցաւ և նա կարողանում է յաղթանակը տանել գոյութեան կռւում... Այն ցեղերը, ազգերը և դասակարգերը, որոնք ժամանակակից հոսանքից յետ են մնացել, չեն զինւած նոյն կատարելութիւններով՝ տեղի են տալիս, յաղթվում և դատապարտվում անյետանալու. կենդանիների բարմաթիւ ցեղեր, պատրաստ չը լինելով գոյութեան կռւի մէջ պաշտպանել իրենց՝ կուլ են գնացել այլ կենդանիների և դատապարտւել ոչնչանալու։ Շատ հզօր ազգեր, որոշ շրջանից յետոյ, անկարող լինելով ժամանակակից յառաջադիմութեան հետ ընթանալ ոտնակոխ են եղել կուլտուրական ընթացքից և զրկւել գոյութիւնից.—այդպէս և շատ ցեղեր ու դասակարգեր, յամրացնելով իրենց յառաջադիմական քայլերը կամ չը կարողանալով իրենց շրջապատող այլ ցեղերի կամ դասակարգերի արագացող քայլերի հետ համահաւասար արագացնել և իրանց քայլերը ոչնչացել են։

Իւրաքանչիւր ժամանակամիջոց իւրաքանչիւր շրջան ունի իւր որոշ պահանջները. ժամանակակից շրջանի պահանջները չկատարել չհասկանալ նրան և դիմադրել նշանակում է յետադիմել, նշանակում է քայլ առ քայլ մօտենալ անկման։

Մասնաւորում ենք մեր խօսքը հայերի վրայ և այն էլ մի դասակարգի վրայ, որը իւր գոյութեան սկզբի օրից նոյնն է ինչ որ է այսօր. որի համար ժամանակից կեանքն ու

կական) ազդայինքները քանց օրչարի փրութքլկսեն. անջաղ չեն մեռնելի. օրը տասը տիր խօքեհանդիստեն կատարելի. մեր ծուռ վարթըպետն էլ խօքեհանդստին սեղանէն չօրօր սեթալով բուռալի «էրուն,վրէժ, կեծակ, կրակ, սուր, հրրացան,նաջաղ «չօմաղ։» Ֆը՞ռ...տօ, քիլեք մ'ի օխտրպոչէն թիւլքիներ.տօլայ բաս ընկի դիտինը չէք մրտնելի, ձեր սուրաթը թափի հէյ... աղէկի խաչերը, դեանք կոտորւեն՝ դուք դեաղ գէլու պատարաղ արէք։

Ֆօլայ, բաս էդ մեր վարթըպետը փրշտվը չմայլ կախէ կշտէն։ Ֆահ, նոր խասկրցամ որ էդ գէօրսաթմանները լուի սուրթ տեղը ուրանցը մաթալի արած, մարթ են լօխպելի։

***

Ջահանամը Աստծու ղաղայ բալէն ձեզնէ զատ, եռանդ մեր վարթըպետը չափարի ղընաց Թարիէզ, դէն կասեմ որ էթալուլի Մարաղայ. օղորմի դեար խօրը. Սալմաստ իշղուղա լուսաւորցուց խերիքի, փառաւորանք, մըղայ էլ թող Մարաղայ լուսաւորցուցի....

Ամմայ վայ ընձիկ, մեխկրս ասեմ. վարթըպետի ետեէն մէ թելղրաֆ արիմ Մարաղայ իմ քէօհնայ դոստ Յունան վարժապետիս՝ ասեմ տօլայ, ամանաթ ձեղի մեր վարթըպետը, գիւլի լման պախէր; ագեար ուզես էք որ գլուխքերդ բեղալ (հանդիստ) ըլը, վարթըպետը խասնելը բաշտան երկու ջուչ սափոր գինի սուէք դեամին, խաշխամբուրը բոլ արէք, տեղը տաք, օթուզ-իքիյէն (թխթախաղ) շատ խօշլամիշ կըլը (գինասեմ դեաղ շատ խաղացող կայ) նըստեցուցէք վերի գլոխը, դուք քաշուէք գրաղ.... Մախլաս ամանաթ ձեղի, մենք դեաղ չը գիցանք բաշրել, բալքի դուք մեթեխի վըրայ անէք։

***

Վալլահ մեր զադ էլ եռանդ մեր էդ եալանչի ազդայինքերէն լըսած՝ չեմ նեալի սուրթի եա ազուրթ։ Ասեսենէր եանի էսքան դալմաղալքերէն եսի կեախնը խայերուն մէ գլոխ կարքեն. հարշանդ իմ խելքէն մըղայ դատի, ամմայ ինչ ես եմ տըսնալի՝ էտ քեաֆըրքերը խայերուն Իսկեանդարի ճընջըղան օրը քըցելէն եսի կասեն «Հէյվան աղա՛դ, աղա՛դ,»

Պրոն Ջաւիդ, Խոյեցի Իսկանդարի ֆօրենը ճընջուղքերը շատ կուտենէր, մէ օր խեղճը լափ դարի իկեալէն իսի, առատրկէն ինչու իրկուն փետի լման տընկըւելի կայնելի ցորենի շուչի (թեղի) կուշտը. խէտ ճընջուղքերը ժողնըւեսն՝ բոյովը մէկ պարղըւելի շուչի վրան, ճընջուղքերէն մէկը պըռնելի, եսի տիւն ես իմ աղան, էդ հեյվանի փիտուրքերը մէկ մէկ փեսելի՝ ասելի «էլը կուտես, էլը կուտես». խէտ անելի լափ միս, եսի թալելի վեր ասելի «Հէյվան աղա՛դ, աղա՛դ, քելի դասդաիդ խեարաը տար»։ Մրկա մերը՝ն'ի. օհո՛, էդ ֆռանդքերին ես աղէկ կ'ճանչնամ. էնքան եաւաշ, եաւաշ կանեն, ինչու խայերը Իսկեանդարի ճընջըղան օրը լինեն, էն վախտը կասեն «Հէյվան աղա՛դ, աղա՛դ....

***

Ագեար Սալմաստայ խէյրը շառէն խարցուցես պարոն Ջաւիդ, աղէկըն էնի որ ըսկի խաբեար չ'առնես, իմ առածները մեկին տաը կանանչեսեն... կարճ կտրեմ.վերէն Աստծի կրակ թափելի կոտրքերիս. ցածէն էդ դէօրսաթմանները.... մընացիրենք շիւար։

Ախբը իմ ինչ պարտքըն'ի որ զուրցամ. ես վեադային ասեմ վեարտեղ որ էտ վարթըպետը նեան տեսուցը քեօք քըցեն՝ տակը վեր կըլը. հալայ մէ տարի չ'կայ որ հաֆտըւան ոտ'ի տրած՝ Աստած հեռու տանի, ջըրհեղեղի լման տներէն ջուր'ի տիւս իկեալի, 350 տուն հաֆտըւանը քեանց էօրլագի ջրի մէջա լողալի.... բաս էդ Աստըծու պատիժը չի ինչի։ Հօ՛, հօ՛, մէ խօսք էլ ունեմ մրտըքերդ բախէք. կ'ասեսեմ, մէ քեանի տարի չըսնի ագեար հաֆտըւան տեսուչըն եան վարթըպետը Սօդոմ-կոմոր չ'չինին, ինչ կուզէք ասէք։

Էն վեադան ճարս ինչ, շողուլս նեան ըզդաց սուս սեալամ կ'տանեմ կ'տանեմ վարթըպետի տէմը, կասեմ «Հայր սուրբ! աջիդ մեռնեմ, էլ պատ տընելը թօրայ արիմ, ես էլ եմ ըլելի ազդային մարթ. դէ որ լօխպելը (պլոկելը) անպատիժք՝ մնալի, լօթի, լոխպի-լոխպենք։»

Էլ գլօխ չ'ունեմ դեանց խետը տընելու. դիւն սաղ ես սալամաթ։

Քեռ մուշակ
Ֆարրուխ

նրա պահանջները ոչ մի նշանակութիւն չունեն, և որը, բնականաբար, ժամանակի պահանջների համեմատ չընթանալով, մօտենում է քայլ առ քայլ իւր անկմանը։—Դա հայ հոգևորականութիւնն է...

Փոխվում է շրջանը, փոխվում ժամանակը։ Ժողովուրդն սկսում է յառաջադիմել, կեանքի նորանոր պահանջներ զգալ և ձգտել դէպի նա, իսկ հոգևորականութիւնը մնացել է իւր նախկին տեղը մնալուած. այն է՝ ժողովրդից շատ ետ։ Որքան ժողովուրդը յառաջադիմեց այնքան հոգևորականութիւնը ետ մնաց, այնքան ժամանակակից պահանջներին անկարող եղաւ բաւարարութիւն տալ որ և ժողովուրդը երեսը շուռ տուեց նրանից։ Հարցրէք նոյն այդ հոգևորականներին, թէ ինչպէս է վերաբերվում ժողովուրդը զէպի եկեղեցին. բոլորի բերանից էլ նոյնը կը լսէք, թէ՝ ժողովուրդը սառել է, եկեղեցի չի յաճախում հայն հայն — Ինչն է արդեօք ժողովրդի այդ մայրենի եկեղեցուց սառելու պատճառը. միայն այն, որ հայ հոգևորականութիւնը, որի հետ և եկեղեցին, ժամանակակից պահանջների հետ չեն գնում. և ինչպէս կարող է ժողովուրդը իրեն կապած համարել մի հիմնարկութեան, մի դասակարգի հետ, որը ոչ իւր ուրախութեան ուրախակից է, ոչ ցաւերին ցաւակից և թէ ժողովրդի ուրախութեան, թէ վշտի ժամանակ նա շարունակում է անտարբերութեամբ իւր միւնոյն ընթացքը. ապացոյցներ շատ կան։ Ժամանակից պահանջների ֆրազներով չէր, որ մի հոգևորական ամբողջ հայ ժողովրդին կախարդեց։ Նոյն այդ հայ ժողովուրդը չէր, որ ըմբռնելով նորա կեղծիքը, այսօր զզվում է նորա անունը լսելիս։ Շատ հեռուն չը գնանք, վերցնենք նոյն իսկ Թաւրէզի ղովուրդը. կիւրակի օրերը առհասարակ շատ քիչ ժողովուրդ է յաճախում եկեղեցին. բայց երբ անցեալ կիւրակի զանազան տատանումներից յետոյ Հայր Սառաջեանը յայտարարել էր թէ հայ նորագոյն նահատակների յիշատակին հոգեհանգիստ պիտի կատարի՝ ժողովուրդը խռնուել էր եկեղեցին և որպէսի յափշտակութեամբ լսում էր Սառաջեանի բերանից ժամանակակից պահանջներին միանգամայն համապատասխան քարոզը... Ի՞նչու նոյն այդ ժողովուրդը ուրիշ անգամներ նոյն այդ վարդապետի քարոզը չը վերջացած իրար ետևից դուրս են գալիս եկեղեցուց, իսկ այս անգամ ամենայն հոգեմայլութեամբ լսելուց զատ, մի քանի օր շարունակ ամբողջ ժողովրդի խօսակցութեան նիւթը այդ քարոզն էր։ Շատ պարզ է, որովհետև առաջին թմբեցուցիչ քարոզները ժողովուրդը հաղար անգամ լսել էր, նոյն կրկնութիւններն էին միշտ տարբեր բառերով, որոնք ոչ մի կապ չունէին իւր առանին կեանքի հետ, իսկ վերջին քարոզը ժամանակակից պահանջների արտայայտութիւնն էր. նա շօշափում էր նոյն այդ ունկնդիր ժողովրդի եղբայրակիցների թշուառութիւնները, նրանց կարիքը, նրանց պահանջները։ Այդ էր, որ ժողովուրդը հոգեմայլութեամբ լսում էր։

Այս բոլորը կենդանի ապացոյցներ են ժողովրդի ժամանակակից պահանջների, որից դժբախտաբար հեռու է հայ հոգևորականութիւնը։ Ժամանակակից պահանջների հետ չընթանալով հայ հոգևորականութիւնը՝ յառաջադիմութեան ասպարիզում շատ ետ է մնացել ժողովրդից և որքան յառաջադիմում է ժողովուրդը, այնքան աւելի և աւելի ետ է մնում հոգևորականութիւնը. որ նոյնն է՝ մօտենում է իւր վերջնական անկման։

Երկու ճանապարհ է մնում հայ հոգևորականութեան. կամ պէտք է նա ձգտի արագացնել իւր քայլերը, ընթանալ ժամանակի պահանջների հետ կամ ոչնչանալ։ Ամէն երեւոյթ ցոյց է տալիս, որ մեր հոգևորականութիւնը ընտրել է այս վերջինը և որ նա գլորվում է....

Լ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ անգամ ասել էինք որ 5 օր ժամանակ ենք նշանակում Հայկ. դպրոցի հոգաբարձութեան պատասխանելու համար թէ ինչու մի ծնող իր որդուն հանել է դպրոցից և բողոքականաց ուսումնարանը տարել։ Հոգաբարձութիւնը երևի իրեն միանգամայն յանցաւոր զգալով այդ խնդրում, չը համարձակուեց պատասխանել, վախենալով որ երևան չը գան խայտառակութիւններ, որոնց ենթակայ է այժմ Հայկազ. դպրոցը շնորհիւ հէնց իրենց հոգաբարթեան թուլամորթութեան։ Այդպիսի դէպքում խմբագրութեանս վրայ է ընկնում ճշմարտութիւնը երևան հանելու տխուր պարտականութիւնը։ Մենք այդ կանենք քիչ յետոյ։

—

Սպահանի Ամեն. վանքի համար սպասում ենք նոր տեղեկութիւնների և դրա համար է որ մեր № 37 և 39 համարներում տպուած առաջնորդողի վերջին կտորը ուշացաւ։ Իսկ «Կերպարանափոխութիւնը գիտութիւնների մէջ» գիտակոն զրոյցների շարունակութիւնը յոյս ունինք որ կը յաջողուի մեզ տպադրել այն ժամանակ երբ այրող հարցերից քիչ թեթևանանք. ուստի խնդրում ենք մեր թղթակիցներից որ առ հասարակ համառօտ գրեն և միշտ ի նկատի ունենան Շաւիղի փոքրիկ ծաւալը։ Երբեմն շատ լաւ յօդուածներ և թղթակցութիւններ հնարաւոր չեն լինում տպել երկար լինելուն համար, իսկ համառօտել նրանց շատ ժամանակ է խլում։

—

Դավրէժից մեզ գրում են հետևեալը։ «Լսում ենք որ Մար-Շիմոն, ասորոց պետի վրայ համիդէի գնդեր են գնում։ Սահմանագլխի վրայ այդ զօրքը հանդիպել է Վան գնացող զինուած մի հայ խմբի, որի հետ բաղխում են ունեցել. քիւրդերի կողմից կորուստը մեծ է եղել. 5—6 ժամից կուից յետոյ ընկնում են 100-ից աւելի հեծեալ համիդիէներ և 10-ի չափ հայեր. վերջիններս յաջողվում են անցնել, իսկ զօրքը շարունակել է գնալ դէպի Զուլամերիկ։ Սահմանագլխի վրայ թիւրքերը և քիւրդեր կողոպտելով շատ հայ գիւղեր, կողոպուաը բերել պարսից հողի վրայ են ծախում։

—

Daily Cronicle թերթը հաղորդում է որ Երզնկայում և Տրապիզոնում ևս պարսից հիւպատոսները, կոտորածի ժամանակ մեծ օգնութիւն են տուել անմեղ հայերի և նրանցից շատ շատերի ազատել են մահուանից։

—

Նոյեմբեր 30-ից լուր է հասնում Ռէյտէրի գործակալութեան միջոցաւ որ քիւրդերը և համիդիէ ձիաւոր զօրախումբը ցեղապետների հրամանատարութեամբ և միացած կանոնաւոր զօրքի հետ, աւերումներ են անում ամբողջ Վանի նահանգում և սոսկալի անգթութիւններ են գործում։ Կարթալան գիւղի ամբողջ բնակիչներին, աւելի քան 200 հոգի, կոտորել են։

—

Անգլիական Daily News թերթը հաղորդում է որ Սասունի թիւրք բնակիչները յայտնեցին որ եթէ միսիոնարները շարունակեն հայերին նպաստներ տալ, նրանք կը յարձակուեն հայերի վրայ և Բիթլիսի կոտորածի պէս կանեն։ Անգլիական հիւպատոս Համպսոնը հեռագրեց որ վտանգ է սպառնում նպաստներ բաժանող ամերիկան երեք միսիոնարներին և Կ. Պոլսի անգլիական ու ամերիկական դեսպանատներից հրահանգ ուղարկուեց որ ընդհատուի մի առ ժամանակ նպաստներ բաժանելու գործը և բաժանողները հեռանան երկրից։ Այնուամենայնիւ Հերբերտ, դեսպանի պաշտօնակատարը յոյս ունի որ կը յաջողուի նորից սկսել բաժանելը և ազատել ազգաբնակութիւնը սովամահ լինելուց։

—

Թէհրանում այժմ ցրվում են մի յայտարարութիւն, որով Աստղ Արևելեան ընկերութեան գործադիր ժողովը պատիւ ունի յայտնելու յարգելի հասարակութեան, որ յառաջիկայ 1896 թուականից սկսած հրատարակելու է մի շաբաթաթերթ «որ ի չգոյէ լուրջ կարեկիր և բարեխիղճ մի թերթի» ինքն է լինելու այդ լուրջ ու կարեկիր այլ և «բարեխիղճ» թերթը և որովհետև «բազմատեսակ կենսական խնդիրներն մեռած կամ անլուծելի մի վիճակի մէջ են մնում» ինքը լուծելու է և կենդանացնելու նրանց «պաշտպան կանգնելով ճշմարտութեան և հասարակական ընդհանուր շահերին»։ «Բարին, գեղեցիկն ու ճշմարիտը» (Տարազից փոխառած) լինելու է նրանց բնաբանը։ Շատ հետաքրքիր է իսկապէս տեսնել Թէհրանի խաւարամիտ կուսակցութեան այդ թերթի պաշտպանած բարոյ, գեղեցկի և մանաւանդ՝ ճշմարտութեան գոյնը։

—

Պ. Նիկոլա Հարմստէյն, Ռուսաց բանկի քարտուղարը նէր է թողել մեր խմբագրութեան մէջ մոգական մի լապտեր ծառայացնելու նրան հայոց համար բարեգործական նպատակների, ծառայացնելու տնօրինութիւնը և ընտրութիւնը թողնելով խմբագրութեանս բարեհայեցողութեանը։ Լապտերը առաջին անգամ պիտի գործածուի յօգուտ Ազգ. յին ընթերցարանի (Դարվազա-Ղազվինում) տրուելիք յառաջիկայ դեկտ. 10-ի երեկոյթի մէջ։ Խմբագրութիւնս յայտնում է շնորհակալութիւն պ. Նիկոլա Հարմստէյնին, իր ընծայի համար։

—

Մշակը հաղորդում է որ բժիշկ Խավկին որ գնացել էր Հնդկաստան փորձեր անելու խոլերայի պատուաստման վրայ, յաջողութեամբ կատարել է և այնտեղուր մեծ հիւանդութիւններ են եղել, 18 անգամ նուազել են, պատուաստուած 43,000 հիւանդներին ոչ մի փորձանք չէ պատահել պատուաստման միջոցին։

—

Հոկտեմբեր 29-ին և 30-ին անձրևներից Կուր գետը Կովկասում հեղեղելով բարձրացել է 3 սաժէն և շատ գիւղեր տակով արել. մեծ վնասներ են առաջ եկել. Գորին գրեթէ լիճ է եղել. երկաթուղու գիծը հարիւր վերստ փչացել է. Բաթումի և Փոթիի մէջ յարաբերութիւնը կտրուած է։ Վնասը միլիոններ է հաշվում. խիստ անձրևները շարունակվում են լեռնաշղթաների վրայ։

—

Էնզէլի Կազվինեան խճուղին շինող ընկերութիւնը սաացաւ ն. Վ. նախարարապետից Էնզէլիում նաւահանգիստ շինելու արտօնութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Ոճագործական—ընկերական մարդաբանութեան յայտնի մասնագէտ Լոմբրոզոն իր մի «Մենք աւելի խենթ ենք թէ մեր հայերը» վերնագրով յօդուածում խօսելով կիսաքաղաքակրթ և վայրենի ազգերի մէջ դէպի խենթերը ունեցած նկատումի մասին ասում է

«Բարբարոս ժողովուրդների մէջ—գիժը հիւանդ չէ նկատվում այլ պատմական դեր ունի։ Նա վախ է ազտում, պաշտուած է ամբոխից և հաճախ իսկ թագաւոր է լինում։ Հնդկաստանում, շատ խենթեր սիրելի են, բրահմանները նրանցից պատգամ են հարցնում։ Շատ ազանդներ կրում են մտային խանգարման կնիք... Հրէաների մէջ խենթերը մարգարէ էին համարվում և Նավի նշանակում է թէ «մարգարէ» և թէ «խենթ»...

Բայց Լոմբրոզոն չէ բաւականանում թուելով այդպէս երևոյթներ վայրենի ազգերի մէջ. յաջորդաբար նա, պրպտելով մարդկային պատմութիւնը, պարզում է ամբոխային հոգեբանութեան շատ երևոյթներ։ Ամբոխը մի խենթի, մի շաղատանի կամ մի մեծ հանճարի, երբեմն մի զէվզէկի կրակոտ խօսքերից, շարժմունքներից դրաւած ինչ գժութիւններ ասես, ինչ վայրենութիւններ ասես չէ գործում։ Կրօնական վայրենութիւնը և միստիցիզմի տխուր արդիւնքները միմեանց խառնած, շատ ճարպիկ բարբարոսներ, որոշ նպատակներով, հեշտութեամբ են կարողանում ամբոխին կատարել տալ այնպիսի խժդժութիւններ, որ նա, իր լուրջ ժամանակը կը սոսկար լսելիս իսկ։ Այն ամբոխը, որ մի յեղափոխութեան ժամանակ կտոր կտոր է անում այս կամ այն զոհին, խաղաղ ժամանակ սոսկում կ՝արտայայտի եթէ կարդայ Ֆրանսական յեղափոխութեան արիւնալի շաբաթայ պատմութիւնը։ Դրա պատճառը այն է, որ որպէս խոլերան ու տիֆը, ջղային ծայրահեղ գրգռութիւնը, որոնց հետևանք խենթութիւնն ու միստիցիզմը, կրօնական վայրենութիւնն ու մոլեռանդութիւնը՝ նոյնպէս վարակիչ են և հաճախ շատ աւելի արագ, քան նոյն ինքը խոլերան։ Պատմութեան մէջ

չատ կան ապացոյցներ, ոչ մի կրօն աղատ չէ այդպիսի վարակիչ վայրենութիւնների շնորհիւ արած մարդկային զոհերից։ Միայն փիւնիկական և Կարթագի կռապաշտութիւնը և Մալոխը չէին որ մարդկային կենդանի զոհեր էին տանում։ Միջին դարում ինկվիզիցեան մարդիկ կենդանւոյն այրել խարոյկների վրայ. նրանից յետոյ աղատամիտ Կալվինն էր որ Ժընէվի հրապարակի վրայ կենդանւոյն այրել տաւ Միշէլ Սերվէին և այժմ... 19 դ տարի վերջերում, աշխարհիս ամենաքաղաքակիրթ ազգի մէջ, Ամիրիկայում—Մեքսիքայում, մի զատաւոր 10 հոգի կենդանւոյն վառել է տալիս իրը հերետիկոսների և սմբոխը մինչև իսկ քաջալերում է նրա արածը... Կարդացէք Ռուս. գործակալութեան հեռագիրը Նիւ-Եօրքից։ Այդ կատարվում է 1895 թիւ նոյեմբերին և այն էլ Ամիրիկայում... Բայց ինչու այդքան հեռու գնալ. ինչո՞ւ է կատարվում քաղաքակիրթ Եւրոպայի քթի տակ Հայաստանի բոլոր կողմերում ֆանատիկ, կրօնական վայրենութիւնից և միստեցիզմով դրսուած խուժանը. չէ որ, ով գիտէ որպիսի անձեր, որպիսի միտումներով (հասկացողը կը հասկանայ) դաբթեցնել են սկսել ամբոխի զազանային ինստինկտները, գործածելով այդ նպատակի համար կրօնական զգացումները...Ցանուն կրօնի, յանուն Աստուծոյ 4 ժամուայ մէջ 1600 հայ են մորթում, 3 օր անդադար բրդերի սրին են յանձնում խաղաղ բնակիչների, մի քանի ժամուայ մէջ 800 քրիստոնեայ են յոշոտում. այդ բոլորը անում են յանուն կրօնի..,

Եւ ինչո՞ւ չեն անվում յանուն այդ զգացմունքի։ Սկսած կրօնաւորական դասակարգի, որ պարզիտների շղթայ կազմած, ժողովրդին մէջ առած ծծում են, ապա նրանց անդադար աճող կէզտի ու աղմի մէջ պահում և նրանց քրտինքովը ուռճանում, եղ կապում... սկսած ամէն մի շառլատանից կամ բռնաւորից, որ շոյելով ամբոխի կրօնական զգացումները խաբում է նրան և կամ յենվելով կրօնական ինստինկտների վրայ՝ ճնշում հարստահարում նրան—մինչև յետին շառլատանը, որ մի գիշեր, կերուխումից յոգնացած մի երազ տեսնելով, միւս օրը ստեղծում է մի նոր կրօն և նրա միստիկական ծէսերով ու դառանցանքներով վարակում շատերի...

Բաւական է որ մի գեղեցիկ օր, մի հանճար կամ խենթ, մի շառլատան և կամ մի յուսահատ մարդ,յանուն մի նոր այնպիսի վարդապետութիւն, որ, այսպէս ասած-կպչի ամբոխի «թոյլ էղակներին,» որ օրինակ իր մէջ բոլորշիամ կոյր դիջման (resignation) ունենայ մի ու է հարատահարութեան,ճնշման, թշուառութեան... համար. բաւական է օրինակ որ այդ վարդապետութիւնը քաղաքի թշուառներին մի ապագայ երջանկութիւն,տարուկներին պարզէ մի նոր աղատութեան երազ, խեղճերին՝ մի ապագայ լոյս, ճնշողներին՝ հանգստութիւն։

Բաւական է թոյլ—թշուառ ամբոխին մի այդպիսի ջղերը գրգռող վարդապետութիւն, որ նա իսկոյն վազի նրա ետեից. մանաւանդ եթէ քարոզողը լինի պերճախօս, համոզող և իր օրինակով իր վարդապետութիւն ամրապնդելուց յետոյ, քաջութիւն ունենայ խաչելու իր գազափարների համար։

Մի թեթև յաջողութիւն սկզբում, յետոյ մի խիստ հալածանք-այդ երկու հակասական ընթացքներն էլ ընդունակ են ամրապնդելու նորահաւատներին կամ գրգռածներին, միստիցիզմի մանիտոյով բռնածներին, յանուն մի ո և է բարի գազափարի կամ զղջալի նպատակի համոզածներին՝ այդ երկու հակասական յատկութիւնները ընդունակ են ամրապնդել նրանց նոր տպաւորութիւնը, նրանց արածը վրակիչ դարձնելով։

Ջղային խանդարումն, մտային զառանցանք նոյն իսկ անձնասպանութիւնը-վարակիչ են. օրէնսգիտական բժշկականութիւնը շատ ապացոյցներ ունի այդ մասին. կան երկիրներ, ուր օրէնքով արգելում են յաճախ տալ լրագրների մէջ օրինակ խենթութիւնների, մտային խանդարումների կամ անձնասպանութիւնների յուզիչ պատմութիւններ։

Բնախօսապէս դա բացատրվում է. հոգեբանապէս հասկանալի է և պատմութեան շատ ու շատ անցքերի վրայ լոյս են տրվում այդ բացատրութիւններով։

(Կը շարունակի)

Վ. Փ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՐԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Փարիզ 27 նոյ. (Ն. տ.) Պ, Բէրթլօ, արտաքին գործոց նախարարը, այս երեկոյ, պատգամաւորների ժողովում յայտնեց որ կառավարութիւնը մտադիր է բոլոր ուժով գործադրել տնտեսական իրաւունքներ Մադագասկարում, որը այսուհետև պիտի լինի մի Ֆրանսիական հող։ Նա ասաց որ կառավարութիւնը ամենայն հաւատարմութեամբ պահպանելով հանդերձ իր դաշինքները օտարականների հետ՝ վճռել էր չը շեղուել ներկայ դաշնադրութիւնից, այլ փոփոխել դրան այնպիսի մի ձևով որ կոակածելու տեղիք չը մնայ նրա նշանակութեան վերաբերութեամբ։ Կաբինետը մի յուզուած վիճաբանութիւնից յետոյ այն սքթոլների մասին, որոնք գործուած էին Մադագասկար ուղարկուած զօրքի խընդրի մէջ՝ իր հաւանութիւնը տուաւ նախարարութեան որոշումներին։ 426 հոգի ի նպաստ քուէարկեցին և. 59 հոգի ընդէմ։ Պ. Ալէքսանդր Դումայ—որդու մահը յայտարարուած է,

Լոնդոն 1 դեկտ. Մադակասկարից եկած լուրերը յայտնում են որ նոյ. 22. հպկաեւրոպական մի ամբոխ յարձակեցաւ Քուէկը միսիոնարների վրայ Արիվոնիմանորի մէջ, և սպանեց Զոնսոն միսիոնարին նրա կնոջը և զաւակին։ Երկիւղ կայ որ մի նոր յարձակում ևս կարող է ունենալ միսիոնարական տան վրայ։

Ս. Պետերբուրգ. 30 նոյ։ Նովոյ Վրէմիան յայտնում է որ Սէուլի մէջ տեղի ունեցած յանձնաժողովում վճռուեց որ ժապոնացիները թողնեն Քորէան, առ այժմ երկու զօրախումբ թողնելով Սէուլի մէջ, և երկու զօրախումբ էլ Գրուսանի և Ֆուսինի մէջ։

Լոնդոն, 30 նոյ. Չինական բանակը Եունանի մէջ քշել է Ֆրանսիական պահակ զօրքը որ դրուած էր Մուանքուի մէջ. բայց այս գործի պատճառը դեռ յայտնի չէ։

Բերլին. 30 նոյ. Բարոն դը Գարտնէր Գրիէբնոն որ այժմ ընդհանուր հիւպատոս է Կալկաթայում, հաւանականաբար գերմանական դեսպան կը նշանակուի Թէհրանում։

Մատրիտ. 2 դեկտ. Սպանիական կառավարութիւնը եկող յունվարին 10000-ից բաղկացած մի նոր զօրաբանակ պիտի ուղարկէ Քուբա։

Լոնդոն. 29 նոյ. Տեղեկութիւններ են ստացուած որ Ֆրանսայիք գիտանոց են [illegible] Մա գսիից [illegible] մեր հեռու։—Անգլիայի և Ֆրանսիայի մէջտեղ եղած բանակցութիւնները Մէկոնգի մասին, առ այժմ դադարած են։

Բէր ին. 28 նոյ. Ռէյխստագի բոլոր սոսիալիստ պատգամաւորները բանտարկուել են. նրանց բանտարկութեան համար արուած պատճառն այն է որ նրանք վտանգի են ենթարկում հասարակութեան կարգապահութիւնը։

Բերլին. 2 դեկտ. Գերմանական կառավարութիւնը լուծել է բոլոր սոցիալիստական կազմակերպութիւնները և քաղաքական հալածանքը օր ըստ օրէ աւելացնում է։

Հռոմ- 3 դեկ. Մի քանի օրուայ վիճաբանութիւնից յետոյ, սինեօր Քրիսպիի կաբինէտի համար վստահութեան քուէ տրուեցաւ 136 ձայնի առաւելութեամբ։

Կ. Պոլիս 5 դեկտ. Դեսպանները նորից դիմումներ են արել Բ. Դրան՝ պահանջելի կրկնապատկութեան խնդրի վերաբերութեամբ։ Դիպլոմատները կատարելապէս այն գաղափարի են որ տաճկական կառավարութեանը շատ չը պիտի թոյլ տրուի յապաղումներ անել այս խնդրի մէջ։ Սաիդ փաշան, որ վերջերս եղարքոս էր, հրաման է ստացել երթալ պալատումը բնակուել, բայց վախենալով որ մի դուցէ սպանուի, ապաստանուել է անգլիական դեսպանատան մէջ։

Կ. Պոլիս. 6 Սաիդ փաշայի ընթացքը որով մերժել է հնազանդուել սուլթանի հրամանին՝ մեծ յուզում է առաջ բերել այստեղ։ Սուլթանը զանազան նախարարներ և իր անձնական քարտուղարին ուղարկել է որ համոզեն նրան դուրս գալ անգլիական դեսպանատնից խոստանալով որ ոչինչ չի պատահի նրան։ Սաիդ փաշան կատարելապէս մերժել է դուրս գալ և սրը Ֆիլիպ Քըրրին նոյնպէս չէ փորձել համոզել նրան։

Կ, Պոլիս. 7 դեկտ. Բոլոր դեսպանները, և տաճիկները ընդհանրապէս հաւանում են սրը Ֆիլիպ Քըրրի արածը որով նա Սաիդ փաշային ընդունեց դեսպանատան մէջ։ Սուլթանը, ինչ և իցէ, շարունակում է պատգամաւորները ուղարկել և Սաիդ փաշայից աղերսել որ դուրս գայ դեսպանատնից բայց ի զուր։—Ասվում է որ Զէյթունի ապստամբ խումբերի գլխաւորները ռուսաստանցի հայեր են։—Միացեալ նահանգների կառավարութիւնը պահանջել է որ Մարոշի խռովութեան ժամանակ այն պաշտօնեան որ չէ պաշտպանել միսիոնարներին պատժուի և նոյնպէս պատժուին այն զինուորները որոնք կողոպտել են միսիոնարների տները։

Կ. Պոլիս. 8 դեկտ. Պետութիւնների դեսպանները նորից հրահանգ են ստացել պնդելու աւելորդ պահանջաւորներ ունենալու իրաւունքը ստանալու վրայ։ Իրաւունքը ձեռք բերելու համար տերութիւնների առնելիք քայլը վերահաս է։ Անգլիական լրատու նաւերը, որոնք Ասիորումն էին, պաշարուածէին տաճկական ռազմական նաւերով հինգշաբթայ ամբողջ գիշերը, վախենալով որ Սայիդ փաշան կը փորձէ ապաստանել այդ նաւերի վրայ։ Նաւակները ետ քաշուեցին արշալոյսին։ Անգլիական դեսպանը բողոքել է դրա դէմ։

Կ. Պոլիս. 9 դեկտ. Նիլիտով, ռուսաց դեսպանը երէկ ունկնդրութիւն ունեցաւ սուլթանի հետ, նրան ներկայացնելու համար Ցարից եկած մի նամակը։—Սպասվում է որ փոփոխութիւն տեղի կունենայ Թիւրքաց մինիստրութեան մէջ և Սայիդ փաշան նախկին արտաքին գործոց նախարարը, որ ճանաչվում է «քիւրդ» անունով, պ՛տի լինի եպարքոս, որպէս լսվում է։

Արտօնատէր հրատարակիչ՝

ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջիկայ շաբաթ օր, դեկտեմբեր 2-ին Շահաբդիլազիմ թաղի Ս. Թադէոս եկեղեցւոյ ծօնն է. կը լինի հանդիսաւոր պատարագ, որ կը սկսի ժամը 9-ին. փոխանորդ հայրը քարոզ կը խօսի։ Հրաւիրվում է հասարակութեան ներկայ գտնուել։

Ծխական երէց

Մկրտիչ քհնյ. Յովհաննիսեան.

1—1

Այս կիւրակի օրից սկսեալ (նոյ. 11) եօթ շաբաթ շարունակ, հայ աւետարանական եկեղեցոյ քարոզութիւնների ընթացքը լինելու է «Սէր ընդ մէջ մեր» Յայտարարվում է որ ցանկացողները կարող են գալ լսելու այդ քարոզները որոնք կը սկսեն առաւօտեան ժամը 9-ից (ըստ եւրոպական)։

Քարոզիչ Միհրան Դամբուրաջեան.

3—3

GRAND HOTEL

ԳՐԱՆԴ ՕՏԷԼ

Հիւրանոց

ԱԼԱ-ԷԴ-ԴՕՎԼԷՅԻ ՓՈՂՈՑՈՒՄ

ԹԷՀՐԱՆ

10—50

,,ԴԱՎՈՒԹ ԸՆՏԱՆԻՔԸ''

Վ. Ֆ

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՍԱՐԻՈՅ

Հեղինակութիւն ԼՈՒՄԱՅԻ

Գինն է 60 կոպէկ

Դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Типографія Главноначальствующаго, Сергѣю Назарянцу.

Թիֆլիսում վաճառվում է նաև Կենդրոնական և Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցներում։

6—10